ԼՈՌԻ-ԲԵՐԴԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՌՔԸ

Ա. Հ. ԴԱՎԹՅԱՆ

Ստեփանավանից 3 կմ հյուսիս-արևելք, Զորագետի ձախ ափին, այժմյան Լոռի-բերդ գյուղի գեղատեսիլ սարահարթում սփռված են բրոնզեդարյան և վաղ երկաթի մշակույթի հարուստ դամբարաններ, որոնք երբեմն ստորգետնյա փոքրիկ սրահների ձև ունեն, քարաշար պատերով ու սալածածկերով։ 1971 թ. ամռանը, այստեղ կատարված պեղումների շնորհիվ, բացվեց մի մեծ դամբարանասրահ (№ 7)՝ 8 մ երկարությամբ, 2,5 մ լայնությամբ և 2,8 մ խորությամբ։ Սա ուղիղ շարված պատերով թաղման մի սրահ էր, հատակը հիմնահողից. դամբարանն առանց ակնառու արտաքին նշանների էր՝ գետնի մակերևույթից հազիվ 10 սմ բարձրության մի թումբ (նկ. 1)։ Պեղման առաջին իսկ օրերին պարզ դարձավ, որ դամբարանը կողոպտված էր, քանի որ բացակայում էին ծածկի հսկա սալաքարերը։ Նրանց բեկորներից մի քանիսն ընկած էին հատակին և իրենց տակ պահպանել էին շատ արժեքավոր հնագիտական իրեր։ Դամբարանի մասամբ վերականգնված խեցեղեն անոթները պաշտամունքային նշանակություն ունեին։ Սրանք բարձր, սնամեջ, զարդարուն «բուրանոթներ» էին, ընկույզի կեսի ձևով քրեղաններ, կճուճներ՝ զարդարված և ընդելուզված։ Այսպիսի խեցեղեն հայտնի է Հայաստանի ուշ բրոնզեդարյան մի քանի հարուստ դամբարաններից, այդ թվում նաև Լճաշենից։ Իսկ բրոնզ՝ իրերը ներկայացված էին տարբեր տեսակի բոժոժներով, թռչունների արձանիկներով, Ճ տառի ձև ունեցող իրերով, արծաթապատ և զարդարուն կոճակներով, լայնաշեղբ դաշույնով, կաթսայով, ուլունքներով, զարդերով, բրոնզե ժապավեններով, կահույքի մասերով և այլն։ Ուլունքների և այլ զարդերի մեջ երևում էին կարմիր օխրայի մնացորդներ, որով սովորաբար «ներկում» էին ննջեցյալներին։ Դամբարանի հարավ-արևելյան նեղ պատի երկու անկյուններում հայտնաբերվեցին ձիերի գլուխներ ու վերջավորություններ։ Դամբարանի արևելյան կողմում, ցաքուցրիվ պահպանվել էին գլանաձև փայտերի մնացորդներ, որոնք շրջանակված էին բրոնզե ժապավենաձև թիթեղներով։ Այդպիսի փայտերի բեկորներ պահպանվել էին նաև թռչունների և Ճ-աձև օղակների քանդակների, սեպաձև հիմքերի վրա։ Պարզ երևում է, որ Լոռի-բերդի բրոնզեդարյան այս ննջեցյալը նշանավոր անձնավորություն է եղել, քանի որ դամբարան է իջեցվել իր մարտակառքով ու ձիերով և այստեղ հայտնաբերված փայտի մնացորդները, բրոնզե ժապավենները, Ճ-աձև առարկաները, թռչունների զանգակ արձանիկները և բազում այլ առարկաներ զարդարել են փայտե շքեղ մարտակառքը։ Բոժոժ-զանգուլակները, բրոնզե մեծ կոճակները և մի շարք այլ առարկաներ էլ պատկանելիս են եղել ձիազարդի կոմպլեկտին։ Ինչպես երևում է, շատ շքեղ ու բազմաթիվ են եղել ննջեցյալի անձնական իրերը, սակայն հազվագյուտ մետաղներից պատրաստված բարձրարվեստ առարկաները կողոպտվել են հնադարյան գանձախույզների կողմից և նրանց քա-

նակն ու տիպերն այժմ անհնար է վերականգնել։ № 7 դամբարանի վաղեմի հարստության ու շքեղության մասին այժմ կարելի է դատել Լճաշենի ցեղային առաջնորդների դամբարանների պեղումների տվյալներով, դամբարաններ, որոնք թե՛ իրենց արտաքին ու ներքին ձևավորմամբ, թե՛ պահպանված իրերի տեսակներով, տիպերով, քանակով, ժամանակագրությամբ, թե՛ թաղման ծեսով ու արարողությամբ միանդամայն համապատասխանում են Լոռի-բերդի XIV—XIII դդ. նկարագրվող դամբարանին[1]։



Նկ. 1

Ակնհայտ է, որ վերը նշված դամբարանների այս ձևերն ու թաղման արարողություններն սկիզբ են առել Արևելյան Հայաստանի տարածքն զբաղեցնող ցեղերի միջավայրում, տակավին մ. թ. ա. III հազարամյակում, զարգանալով փոփոխվել են ամբողջ երկրորդ հազարամյակի ընթացքում և ներկայացնում են տեղական հիմքի վրա աճած երևույթներ։

Նման թաղումներով հայտնի են Թրիալեթիի[2] և Դմանիսիի միջին բրոնզեդարյան դամբարանները, Կիրովականի նշանավոր դամբարանաթումբը[3], որտեղ, թեև դիակառքը չէր պահպանվել, սակայն դամբարանի ծավալը, իրերի դասավորությունը, եզների դանգերի ու վերջավորությունների առկայությունը և կենտրոնական մասի վրա նկատվող հետքերը վկայում են այդ մասին։ Նման թաղում պետք է ունենար նաև Լոռի-բերդի № 6 միջին բրոնզեդարյան քարարկղային կողոպտված դամբարանը, որն իր չափերով, ձիերի զանգերի նմանարինակ դասավորությամբ, դամբարանային նյութերի կրկնությամբ դասվում է վերոհիշյալների շարքը։

---

1 Նշված տիպի դամբարանային հուշարձանների թվագրությունը հաստատված է Հ. Ա. Մարտիրոսյանի կողմից, տե՛ս Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 106։

2 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, I, Тбилиси, 1941, էջ 361—375, 451։

3 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Ереван, 1949, էջ 46—47; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, էջ 64—66։

Շեշտը դնելով դամբարանային հուշարձանների և թաղման համապատասխան արարողությունների զուտ տեղական զարգացման վրա, ուսումնասիրողները միաժամանակ նշում են, որ այստեղ առկա է նաև խեթական մշակույթի ազդեցությունը[4], մշակույթ, որի հետ Հայաստանը կապված էր բրոնզում տեսանելի և ժամանակի ընթացքում այժմ արդեն անտեսանելի առնչություններով։ Ավելին, նշելով թաղման ծեսերի խեթա-հայաստանյան աղերսները, Հ. Ա. Մարտիրոսյանը գտնում է, որ մ. թ. ա. II հազարամյակի թաղման շքեղ ծեսը ինչ-որ չափով կապվում է հայ հեթանոս թագավորների և Առաջավոր Ասիայում բնակվող սկյութական առաջնորդների թաղման արարողությունների հետ[5]։ Այս ամենը օրինաչափ է այն իմաստով, որ նշված երևույթները զարգանում էին աշխարհագրական, պատմական, էթնիկական ժամանակագրական հաջորդական կապի մեջ, Առաջավոր Ասիայի որոշակի մի հատվածում. Աստիճանական զարգացման առումով այժմ արդեն զարմանալի չէ այն հանգամանքը, որ թաղման շատ նման ձևեր ու արարողություններ նկատվում են նույնիսկ հունական աշխարհում։ Բուցե այստեղ էլ դիտելի լինի խեթական աշխարհի ուժեղ ազդեցությունը։ Բերենք մեկ օրինակ։ Խոսքը մ. թ. ա. II հազարամյակի I կեսի միքենյան շախտային դամբարանների մասին է[6], որոնք ուղղանկյունաձև քարարկղեր են, բացառիկ թանկարժեք գեղարվեստական իրերի պարունակությամբ։ Սրանք ծածկված են սալերով, որոնք երբեմն կրում են մարտակառքի բարձրաքանդակներ և պարուրաձև այնպիսի զարդեր, ինչպիսիք կան Լճաշենի և Ադիամանի սայլերի վրա[7]։ Ի դեպ, սրանք առաջին վկայություններն են ձիերով լծված մարտակառքերի, որոնք օգտագործվել են Հունաստանում (մ. թ. ա. XVI դար)[8]։

Ավելորդ չէ հիշատակել նաև մ. թ. ա. VIII դարի կեսով թվագրվող, Աթենքի Դիպոլինյան գերեզմանոցում հայտնաբերված թաղման կարասները[9], որոնք ամբողջովին զարդարված են գունազարդ պատկերներով և երկրաչափական նախշերով։ Պատկերների թեման թաղման ու ողբի տեսարաններ են, որտեղ հանգուցյալը բարձր, ցանցահյուս հիմքով փայտե պատգարակի վրա է, ինչպես Լճաշենի պատգարակները։ Մի դեպքում այս պատգարակը, որի վրա հանգուցյալը պառկած է, դրված է քառանիվ սայլին, որին լծված են զույգ ձիերը։ Այս շարքը լցված է սվաստիկաների, արևի այլ նշանների, թռչունների, լայնաթիկունք և սակրաձև մարմիններ ունեցող մարդկանց պատկերներով՝ տեսարաններ, որոնք շատ հարազատ են մեր բրոնզեդարյան հուշարձաններին և թաղման ձևերին։ Կարասների վրայի ոլորանախշերն իրենց տարբեր ձևերով

---

[4] Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 100; Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 45; А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 72—73։

[5] А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, էջ 110—111։

[6] G. Perrot et Ch. Chipiez, Histoire de l'art dans l'antiquité la Grece primitive, l'art mycénien, t. VI, Paris, 1894, էջ 764, նկ. 359, էջ 765, նկ. 360, էջ 767, նկ. 362։ Н. А. Сидорова, Искусство Эгейского мира, М., 1972, էջ 146—150։

[7] А. О. Мнацаканян, Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан, СА, 1960, № 2, էջ 140, նկ. 2 և 3։ Ե. Լալայան, Դամբարաններիթ պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 194—197, նկ. 193—196։

[8] Г. Чайлд, У истоков европейской цивилизации, М., 1952, էջ 113։

[9] «Искусство Древней Греции», М., 1971, նկ. 70 և 72։

նույնպես սիրված զարդաձևեր են մեր խեցեղեն ամանների համար և բնորոշ են նաև փոյուգիական արվեստին։

Հայաստանի կապերն ու փոխառնչությունները խեթերի ու Կրետե-միքենյան աշխարհի հետ իհարկե չեն սահմանափակվում դամբարանային ձևերով ու թաղման արարողություններով։ Ուսումնասիրողներն արդեն բազմիցս նշել են նյութական արտադրության բազում ոլորտներում զգացվող ազդեցությունների կամ ուղղակի տրանզիտի առկայությանը մ. թ. ա. II—I հազարամյակներում[10]։ Այժմ Լոռի-բերդի վերը նկարագրած № 7 դամբարանի նյութերի հիման վրա կարելի է լրացուցիչ նոր դիտողություններ անել խեթա-հայաստանյան—Կրետե-միքենյան մշակութային առնչությունների մասին։ Խնդիրն այն է, որ այս դամբարանի բրոնզե իրերի մեջ գտնվեց նաև մասամբ վնասված մարտակառքի մի մոդել, որն զգալի հետաքրքրություն է ներկայացնում այդ կապերի իմաստով։

Սույն հոդվածով մենք ներկայացնում ենք մարտակառքի այդ մոդելը իր մոտավոր համանմաններով և նախնական ուսումնասիրության ենթարկում այդպիսիները։

Մարտակառքն (նկ. 2) իր զույգ ձիերով կանգնած է քառանկյունի, փոքրինչ գողավոր, սնամեջ պատվանդանի վրա, որի կողային չորս պատերն ու հատակը եռանկյունաձև, իսկ վերին մակերեսը՝ երկարավուն բացվածքներ ունեն։ Պատվանդանի մեջ բրոնզե երկու գնդիկներ կան, որոնք ժամանակին զանգակների դեր են կատարել։ Պատվանդանն իր հերթին ամրացված է խաչաձև վերջավորությամբ (մի ծայրը կոտրված է) զարդարուն ձողի վրա այնպես, որ կարող է պտտվել իր առանցքի շուրջը։ Մոդելի ընդհանուր բարձրությունը, ձողի հետ միասին՝ 18 սմ է, իսկ մարտակառքի ընդհանուր երկարությունը՝ 14 սմ։ Սա թեթև, փոքրիկ թափք ունի, որի վրա կանգնած են երկու մարտիկ։ Թափքի առջևի մասը կազմված է կիսակլոր ձողից, որը հենվում է միջնամասի ուղղահայաց ցցի վրա։ Թափքը ետևի կողմից բաց է, միայն կենտրոնական մասում բարձրանում է օղակաձև ավարտվող մի ձող։ Թափքի առջևի կենտրոնական մասը ետևի ձողի հետ միանում է երկու փոքրիկ ձողիկների միջոցով, որոնք ամրացված են հատակին ու նրանից բարձր և կիսում են թափքը։ Սռնին, որը հետնամասում է, ավարտվում է վեց շյուղանի անիվներով։ Թափքի կենտրոնական մասում, ներքևից, բարձրանում է կոր առեղը, որի ծայրը ուղղահայաց է և ունի օղակ՝ սանձերի համար։ Ձիերի ուսամասերում, առեղի երկու կողմերից անջատվող լուծը հենվում է ուղղակի նրանց բաշերի վրա։ Լուծի ծայրերին նույնպիսի օղակներ են, ինչպես առեղի ծայրին, որտեղից սանձերը պիտի անցնեին։ Այս օղակները երկճյուղ են, հայերեն Ճ-ի ձևով և հիշեցնում են նույն դամբարանից հայտնաբերված Ճ-աձև քանդակներն ու Լճաշենի նմանօրինակ իրերը։ Ձիերը նեղիրան են, երկարագանգ, կիսաբաց բերաններով, ցցված եռանկյունաձև ականջներով, շատ բարձր, կանգուն բաշերով, աչքերը արտահայտված են փոսիկներով, պոչերը

---

10 Б. А. Куфтин, նշվ. աշխ., էջ 93։ Նույնի՝ Археологические раскопки 1947 г. в Цалкинском районе, Тбилиси, 1948, էջ 20—21; А. А. Мартиросян, Армения в эпоху..., էջ 70—71; Г. Е. Арешян, Малоазийские формы в керамике Армении среднего бронзового века, СА, 1973, № 4, էջ 45—48։ Այդ արտահայտվում է նաև Լոռի-բերդի միջին բրոնզեդարյան № 6 դամբարանի խեցեղենի վրա։

երկար։ Մարտիկները կանգնած են թափքի երկու կողմերում, իրանով հենված նրա եզրերին, նրանց ոտքերը՝ ներքևի մասում միանալով, կազմում են մեկական ձող։ Մարտիկներից մեկը կռացած է։ Նրանք ունեն երկար վիզ. դեպի առաջ կռացածը բարձրակատար սաղավարտով է, մյուսը՝ գլխաբաց է և ուղիղ կեցվածքով։ Դեմքերը տափակ են, երկարավուն, աչքերի տեղում փոսիկներ են, արտահայտված են բերանները և կորնթարդ քթերը։ Յուրաքանչյուրի ձախ թևի տակ, գոտկատեղին, տեղավորված է դաշույն։ Ձիերից առաջ, պատվանդանի կենտրոնական մասից դուրս եկող բարձրադիր ձողի վրա կանգնած է

Նկ. 2



Նկ. 3

սլացքի մեջ գտնվող արու այծյամի փոքրիկ քանդակը, երկար դնչով, փոքրիկ պոչիկով և ղույգ աղեղնաձև եղջյուրներով։

Համեմատելով մարտակառքի այս մոդելը Լճաշենում հայտնաբերվածների հետ, տեսնում ենք, որ սա հար և նման է 1957 թ. Լճաշենում գտնվածին (ՊՊԹ, № 2009/442)։ Ճիշտ նույնպիսի կերտվածք ունեն սրա քառանկյունի պատվանդանը, խարսխաձև ձողը, թափքը, առեղը, բարձրաբաշ ձիերն ու լուծի վրայի Ճ-աձև օղակները (նկ. 3)։ Այստեղ նույնպես ձախակողմյան զինվորը սաղավարտ չունի։ Տարբերությունը միայն այն է, որ առջևի այծյամի փոխարեն այստեղ եղջերու է դրված։ Նույնպիսի թափք ունի նաև Լճաշենի 1956 թ. մոդելը (ՊՊԹ, № 2007/1), այն տարբերությամբ միայն, որ սա մի քիչ ավելի մեծ է և անիվներն ունեն 8—9 շյուղ։ Լճաշենի 1958 թ. երրորդ մոդելի (ՊՊԹ, № 2049/81) թափքը տարբերվում է ինչպես մեր օրինակից, այնպես էլ Լճաշենի մյուս երկու օրինակներից նրանով, որ թափքի հատակը ցանցաձև է, բացակայում են ետևի օղակաձև և մեջտեղի կիսող ձողերը։ Վերջին երկու մոդելների առեղները հիմքից անմիջապես բարձրանում են, մեկը

կորագծով, մյուսը՝ անկյունավոր ձևով։ Լոռի-բերդի առեղը իր բարձրադիր ուղղահայաց ծայրով նմանվում է ասորեստանյան առեղներին[11]։

Մարտակառքի այս չորս օրինակների մեջ Լճաշենից երկուսի (ՊՊԹ, N 2009/442 և 2049/81) և Լոռի-բերդի մարտակառքի նույն կողմում կանգնած մարտիկները սաղավարտ չունեն։ Թվում է, որ սա պատահականություն չէ, հավանաբար ձախակողմյան մարտիկի դորձը մարտակառքը վարելն էր։ Ինչպես մեր օրինակի, այնպես էլ Լճաշենի վերոհիշյալ երկու մոդելների լուծերի վրա նկատվում են օղակներ, իսկ չորրորդի վրա (ՊՊԹ, N 2007/1) օղակների փոխարեն թռչունների քանդակներ են։ Սրա պատվանդանը հարթ է, մարտիկները ոչ թե սանձն են ձգում, այլ ուղղահայաց կանգնած, ձեռքերը դրել են իրար ուսի, իսկ աղատ ձեռքերը բարձրացրել. ձիերի առջևում չկա երևէ կենդանի, ինչպես մյուս մոդելներում[12]։ Ընդհանրապես, Լոռի-բերդի մոդելը, մյուսների համեմատ աչքի է ընկնում իր նրբությամբ և թեթևությամբ։ Եվս մեկ մարտակառքի փոքրիկ մոդել, առանց ձիերի, հայտնի է Պառավաքարի (մ. թ. ա. X—IX դդ.) պեղումներից[13]։ Սրա թափքը փակ առաջամաս ունի, ետնամասը բաց է, անիվները 6 շյուղանի են, երկու մարտիկները հենված են առաջամասին, անզեն են, բայց ունեն մեկ կողմում սրածայր սաղավարտներ։

Բերված նյութերի նկարագրությունից բխում են մի քանի օրինաչափ և մեկ համար կարևոր հետևություններ։

ա) Մ. թ. ա. XIV—XIII դդ. Հայաստանի ցեղային ավագանու դամբարաններում հայտնվում են մարտակառքերի բրոնզե մոդելներ, որոնք Արևելքի և Արևմուտքի հայտնի մոդելների մեջ մոտավոր զուգահեռներ չունենալով, դիտվում են իբրև տեղական մետաղադործության արտադրանք։

բ) Նշված ժամանակաշրջանի մոդելները պատկանում են մարտակառքի մեկ հիմնական տիպի, որի փայտե իրական նմուշները հայտնի են դարձել և օգտագործվել Հայաստանում շատ ավելի վաղ, քան հանդես են եկել նրանց մետաղե մանրակերտվածքները։

գ) Որոշակի տիպի մարտակառքերի արտադրությունը և օգտագործումը Հայաստանում միանգամայն օրինաչափ էր, քանի որ անիվավոր փոխադրամիջոցներն այստեղ երևան էին եկել մ. թ. ա. III հազարամյակում և անցել զարգացման երկար ճանապարհ։ Շրջակա հին արևելյան երկրներում այդպիսիք հանդես էին եկել տակավին V հազարամյակի Հալաֆյան մշակույթի ոլորտներում[14] և այնուհետև տարածվել Օբեիդ-շումերյան մարզերում մ. թ. ա. IV—III հազարամյակներում, որոնց ազդեցության տակ կարող էին ստեղծվել Հայաստանի լավագույն փոխադրամիջոցները[15]։

[11] R. D. Barnett, W. Forman, Assyrische Palastreliefs, Prague, նկ. 20։

[12] Կարելի է ենթադրել, որ այս դեպքում մարտակառքի վրա կանգնած մարդիկ ո՛չ մարտի, և ո՛չ էլ որսի տեսարան են ներկայացնում, այլ՝ հանդիսավոր մի երթ։ Այստեղ ձ-աձև զարդ-օղակները փոխարինված են թռչունների արձանիկներով՝ մարտակառքին ավելի շքեղ տեսք տալու համար. այդպիսիք գտնվել են նաև Լոռի-բերդի դամբարաններում։

[13] С. А. Есаян, А. А. Мнацаканян, Находки новых бронзовых статуэток в Армении, СА, 1970, № 2, էջ 158, նկ. 1, 1։

[14] Г. Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956, табл. XIX.

[15] А. О. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г., СА, 1957, № 2, էջ 149, նկ. 8; նույնի՝ Древние повозки..., էջ 143, նկ. 7, էջ 142, նկ. 5։

Սակայն տվյալ դեպքում մեզ կարող են հետաքրքրել միայն մարտական տիպի արևելյան այն կառքերը, որոնք կարելի է դիտել իբրև մեր նմուշների գոնե հեռավոր ժամանակագրական նախատիպեր։ Այդ տեսակետից ուշադրության արժանի է Հաֆաջայում (վաղ դինաստիական շրջան)[16] գտնված գունազարդ կավամանի վրայի մարտակառքը կամ դիակառքը։ Սրա թափքը արկղաձև է, բարձր ու կամարաձև առաջամասով, որն ըստ երևույթին յուրօրինակ վահանի դեր է կատարել։ Բարձրադիր առեղի վրա նստած է մի թռչուն, իսկ լծված երեք ձիերից երկուսը լուծ ունեն և կապված են սանձերի ու երախակալների միջոցով։ Թափքի վրա կանգնած երկու մարտիկները հավանաբար դիմակավորված են, նրանցից մեկն ըստ երևույթին առաջնորդ է, թիկնեղ, բարձրահասակ, նեղ գոտկատեղով։ Չնայած ժամանակի ու տարածության մեծ տարբերությանը, այս մարտակառքի պատկերը շատ հարազատ է թվում մեր բրոնզեդարյան արվեստին թե՛ մարտակառքի, թե՛ ձիերի ու թռչունի, թե՛ լայ-



Նկ. 4

Նկ. 5

նաթիկունք ու դիմակավոր մարդկանց պատկերներով (նկ. 4)։

Շումերյան մարտակառքերի մի մասն ունի ոչ միայն բարձր առաջամաս, այլև աստիճանաձև, ցածր ետնամաս։ Այդպիսիք են Թել-Ագրաբից գտնված պղնձե և Քիշից գտնված կավե մոդելները (III հազ. I կես)[17]։ Իսկ Ուրից[18] (վաղ դինաստիական շրջան) հայտնաբերված մի բարձրաքանդակի վրա տեսնում ենք բարձր առաջամասով ու առեղով և ավելի ցածր ետնամասով մի մարտակառք։ Նշված մարտակառքերի անիվները բոլոր դեպքերում ծանր են, պատրաստված երեք զանգվածեղ տախտակներից։ Հին Շումերում սրանք օգտագործվել են ոչ միայն որպես փոխադրամիջոց կամ մարտակառք, այլև ուղեկցել են տերերին դեպի հանդերձյալ աշխարհ՝ որպես դիակառք։

Ուրի և Քիշի նշանավոր դամբարաններն են իջեցվել վերոհիշյալ տիպի մարտակառքեր, ըստ որում, երբեմն երկուսը կամ երեքը միաժամանակ[19] (ինչպես Լճաշենում)։ Թաղման հնագույն այս սովորությունը ըստ երևույթին շումերներից տարածվել է ողջ Հին Աշխարհում։ Նշված ընդհանրություններով

16 Г. Чайлд, Древнейший Восток..., էջ 231, նկ. 84։

17 J. Cl. Margueron, Mesopotamie, Genève—Paris—Munich, 1965, նկ. 45։ Н. Д. Флиттнер, Культура и искусство Двуречья, М.—Л., 1958, էջ 115։

18 Г. Чайлд, նշվ. աշխ., աղ. XXIV a.

19 Նույն տեղում, էջ 230։

հանդերձ, հին շումերական մարտակառքերը շատ հեռու են Հայաստանի ուսումնասիրվող մոդելներից թե՛ ժամանակագրական, թե՛ կոնստրուկտիվ, թե՛ կատարելության իմաստով։

Հին արևելյան մարտակառքերի հայտնի բոլոր տեսակների մեջ Լճաշենի և Լոռի-բերդի մոդելներին շատ մոտ են կանգնած խեթական մարտակառքերը։ Անիտտաս թագավորի արձանագրությունից հայտնի է, որ դեռևս մ. թ. ա XIX դարի խեթական բանակում գոյություն ուներ մարտակառքերի ջոկատ[20], իբրև արագաշարժ և հատուկ զորամիավորում։ Խեթական մարտակառքերի տիպերը պահպանվել են եգիպտական այն բարձրաքանդակների վրա, որոնք ներկայացնում են դրվագներ մ. թ. ա. 1296 թ. եգիպտա-խեթական պատերազմից, հատկապես խեթական Կադեշ (Սիրիա) ամրոցի համար մղված մարտերից (նկ. 5)։ Սրանք ունեն վահանաձև և կիսակլոր առաջամաս, բաց ետնամաս, 8 շյուղանի երկու անիվներ, զույգ ձիեր։ Մարտակառքի թափքին, չնայած նրա փոքր չափերին, տեղավորվել է երեք մարտիկ՝ վարող, նետաձիգ ու վահանակիր, որոնք միավորել են արագության, հարձակման ու պաշտպանության ֆունկցիաները[21]։

Կառնակում, Ամոնի տաճարի վրա պատկերված է վերոհիշյալ պատերազմում խեթերի դեմ հանդես եկող Սեթի I փարավոնը մարտակառք բարձրանալու պահին[22]։ Այս մարտակառքը մեծ նմանություններ ունի թե՛ խեթականներին և թե՛ մեր մոդելներին։ Ըստ եգիպտական տվյալների, խեթերն այս պատերազմում դուրս են բերել 3500, իսկ մեկ ընդհարման ժամանակ՝ 1000 մարտակառք։ Անհավանական չէ, որ եգիպտացիներն այս պատերազմում ընդօրինակեին կամ ուղղակի որպես ավար տաներին խեթական թեթև մարտակառքերը։ Եգիպտոսի պեղումներից հայտնաբերված խեթական մի մարտակառք (նկ. 6)[23], պատրաստված ամբողջովին փայտից, ուղղակի կրկնում է Հայաստանի մոդելները, այն տարբերությամբ, որ նրա անիվները չորս շյուղանի են։ Սրանք ավելի թեթև էին, քան ասսուրա-բաբելականը և եգիպտականը, որոնք, ըստ վերականգնված օրինակների, կշռում են 5—10 կիլոգրամ[24]։ Եգիպտոսում հայտնաբերված վերոհիշյալ մարտակառքի տարբեր մասերը պատրաստված են տարբեր տեսակի փայտերից. սոնին՝ լաստենուց, անիվներն ու մյուս մասերը՝ հացենուց. անիվների շրջանակները փաթաթված են կեչու կեղևով։ Փայտանյութը Եգիպտոս էր բերվում Նախարաին (Միտանի) երկրից (ըստ ասորեստանյան արձանագրությունների՝ Նաիրի), քանի որ կեչին Վանի շրջանից հարավ չի աճում[25]։ Լճաշենի սայլերն ու մարտակառքերը նույնպես պատրաստված են տարբեր փայտատեսակներից։ Օգտագործվել է յուրաքանչյուր մասի համար հարմար փայտանյութ, անիվները պատրաստվել են թեղու փայտից, սոնին և առեղը՝ կաղնու, իսկ ծածկը՝ կարմիր ծառի (տիսի) փայտից[26]։

---

20 Н. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, էջ 43։

21 В. Замаровский, Тайны хеттов, М., 1968, էջ 276։

22 «Искусство Древнего Востока», М., 1968, նկ. 136а։

23 В. Замаровский, նշվ. աշխ., էջ 279։

24 Նույն տեղում, էջ 298։

25 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, էջ 124։

26 В. Паланджян, Деревянные повозки из раскопок у селения Лчашен Севан-

Դիտությունն մեջ ընդունված է այն կարծիքը, որ թե՛ խեթերը, թե՛ ասորեստանցիները մ. թ. ա. II հազարամյակի II կեսին ձիաբուծությունն ու մարտակառքեր պատրաստելը սովորեցին խուրրիներից, բայց այդ արհեստները կատարելագործեցին և հեղաշրջում մտցրին ռազմարվեստի մեջ[27]։ Հայտնի է, որ մարտակառքի մուտքը Եգիպտոս կապվում է հիքսոսների ներթափանցման հետ (մ. թ. ա. XVII դարի սկիզբ), որոնց մի զգալի մասը կազմում էին խուրրիները։

Լճաշենի մարտակառքերի մոդելներն ուսումնասիրող հեղինակներից Հ. Ա. Մարտիրոսյանը, լճաշենյան սայլերի ու մարտակառքերի ծագման աղբյուրը համարում է, մի կողմից, Առաջավոր Ասիայի անիվավոր փոխադրամի-



Նկ. 6

ջոցները, մյուս կողմից՝ փորձում է գտնել մ. թ. ա. III հազարամյակի մշակույթից բխող դրանց տեղական արմատները[28]։ Ս. Ա. Եսայանը II հազարամյակի II կեսով թվագրվող այս օրինակների վրա տեսնում է խեթական մշակույթի ազդեցությունը[29]։ Ուսումնասիրողների մի մասը Լճաշենի մարտակառքերը համարում է խուրրիական։ Վ. Իվանովը, օրինակ, դրանք համարում է միտանիական և կապում այն ցեղերի վերաբնակեցման հետ, որոնք ծանոթ էին մարտակառքերին[30]։ Առաջին երկու հեղինակների մոտ բազմաթիվ են գեղարվեստական առարկաների այնպիսի օրինակները, որոնք ապացուցում են, որ անիվավոր փոխադրամիջոցները բոլորովին էլ նորություն չէին Հայաստանի II հազարամյակի II կեսի համար, այլ ունեին իրենց խոր ավանդույթները։ Սակայն ինչ վերաբերում է հայտնաբերված մոդելներին, ապա դրանք իրենց կառուցվածքով իսկապես կապվում են խեթա-խուրրիական աշխարհի հետ։

Անկասկած, մեծ էր խեթա-խուրրիական ներգործությունը ձիաբուծու-

ского района Арм. ССР, «Աշխատություններ պեռական պատմական թանգարանի», 1959, № 5, էջ 259։

27 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 43; В. Замаровский, նշվ. աշխ., էջ 279։

28 А. А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 101։

29 С. А. Есаян, Из истории колесного транспорта древней Армении, «Պատմա-բանասիրական Հանդես», 1960, № 3, էջ 150։

30 В. Замаровский, նշվ. աշխ., Վ. Իվանովի առաջաբանը։

թյան, անիվավոր փոխադրամիջոցների, մարտակառքերի տարածման բնագավառում ամբողջ Արևելքի չափանիշով վերցրած։ Ի. Մ. Դյակոնովը ենթադրում է, որ մարտակառքերն ու ձիաբուծությունը Աքայան Հունաստան ներթափանցեցին Փոքր Ասիայից[31]։ Հիրավի, հունական աշխարհի արվեստի գործերում բազմաթիվ են այնպիսի բնորոշ տարրեր, որոնք խոսում են նույնիսկ բավականաչափ զորեղ ներթափանցումների մասին։ Այսպես, Միքենի 5-րդ շախտային դամբարանի (մ. թ. ա. XVI դար) սալի վրա քանդակված է թեթև մարտակառք, որի ետնամասի ոլորուն ձողը հիշեցնում է մեր մոդելների ետնամասի օղակավոր ձողը։ Մարտիկն իր գոտկատեղին ունի լայնաշեղբ դաշույն, ինչպես Լոռի-բերդի մոդելում։ Դիտելով էնկոմիի կարասի վրա պատկերված մարտակառքը, երկարադունչ և երկարաբաշ ձիերով, սանձով ու լուծով (մ. թ. ա. XIII դար), չի կարելի չվերհիշել մեր մարտակառքերի առանձին դետալները[32]։ Իսկ Կարպիից[33] հայտնաբերված սայլաձև պտյակը (մ. թ. ա. 1100—1000 թթ.) թափքի ձևով ուղղակի կապվում է Լոռի-բերդի մարտակառքի հետ։ Կրետե կղզուց հայտնաբերված մարտակառքի կավե մի մոդելի թափքի ետնամասի ձողը նույնպիսի կառուցվածք և դիրք ունի, ինչպես մեր մարտակառքինը[34]։ Վերջին երեք օրինակները պատկանում են ավելի ուշ ժամանակների, քան հայաստանյան մոդելները և խուրրի-խեթական նրանց նախատիպերը, այդ պատճառով էլ պահպանում և կրկնում են առաջավորասիական բազմաթիվ ավանդական տարրեր։

Պետք է ասել, որ հունական աշխարհի մարտակառքերի կամ սայլերի անիվները մեծ մասամբ չորս շյուղանի են։ Չորս շյուղանի էր նաև Եգիպտոսում հայտնաբերված խեթական մարտակառքի անիվը, որը, սակայն, իր ետնամասի ձողով չէր նմանվում մեր օրինակին. նրանը կողքից բարձրացող երկար ու բարակ՝ ասորեստանյան տիպի մի ձող էր[35]։ Ուսումնասիրողներն անուղղակի ձևով նշում են, որ չորս շյուղանի անիվներն սկսել են օգտագործվել մ. թ. ա. XVII դարից ոչ ուշ[36]։

Ինչպես տեսնում ենք, մարտակառքի ձևերը ողջ Առաջավոր Արևելքում փոխանցվում են միմյանց և կրում են անխուսափելի փոխազդեցություններ, սկսած հարավային Միջագետքից մինչև էգեյան աշխարհ, Անդրկովկասից մինչև Եգիպտոս։

Կարթագենում հաստատված փյունիկեցիները, երբ մ. թ. ա. մոտ 1000 թ. ոսկու փոշի, փղոսկր և թանկարժեք փայտատեսակներ ձեռք բերելու նպատակով սայլերով ու մարտակառքերով ճանապարհորդում էին Աֆրիկայի խորքերը, իրենց ճանապարհին թողել են դրանց պատկերները՝ ժայռանկարների կամ ժայռափորագրությունների ձևով։ Որքան էլ որ տարօրինակ թվա, սրանք շատ նման են մեր մարտակառքերին, իսկ Ժ. Մազելը գտնում է, որ նմանվում են հիքսոսների մարտակառքերին[37]։

---

31 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 43։
32 Н. А. Сидорова, նշվ. աշխ., էջ 210, նկ. 227։
33 «Эгейское искусство», М., 1972, նկ. 104։
34 F. Studnizka, Der Rennwagen im syrisch-phönikischen' Gebiet. „Jahrbuch des Kaiserl. Deutschen Archäologischen Instituts", XXIII, 1907, Berlin. 1908, էջ 167։
35 R. Barnett, W. Forman, նշվ. աշխ., նկ. 15, 26, 27, 142։
36 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы..., էջ 100։
37 J. Mazel, Avec les Phéniciens, Paris, 1968, էջ 246—250։

Խեթա-խուրիական և Կրետե-միքենյան առնչությունների իմաստով հետաքրքրական է նաև հետևյալ փոքր մանրամասնը։ Լոռի-Բերդի մարտակառքի վրա կանգնած մարտիկներից մեկը սաղավարտով է, մյուսը՝ ոչ։ Սաղավարտն ըստ երևույթին կլոր, թասակաձև է եղել, նրա եզրը գլխի վրա բոլորովին չի նկատվում, սակայն զգացվում է, որ փոքրիկ է, բավական իջած ճակատին. Եթե բուն սաղավարտը քանդակի վրա չի արտահայտված, ապա նրա կատարը, որը չափերով բավական մեծ է, առանձնապես շեշտված է։ Սա բարձրանում է ուղղակի գագաթից, լայն փռվում և ծայրերում սրանալով՝ իջնում է երկու կողմերում համարյա հավասարաչափ ձևով։ Լճաշենի մարտակառքերի ռազմիկները նույն սաղավարտն ունեն, աննշան տարբերություններով։ Առաջավոր Ասիայի հնագիտական, գեղարվեստական իրերի, բարձրաքանդակների և այլ փաստական նյութերի մեջ միշտ չէ, որ կարելի է հանդիպել նմանօրինակ սաղավարտների։ Սրանք, իհարկե, ձևով հիշեցնում են խեթական, վաղ ուրարտական և ասորեստանյան սաղավարտները[38], սակայն չեն կարող համանման համարվել։ Մեր մոդելի սաղավարտին բավական նման սաղավարտ ունի Մարաշում[39] ձեռք բերված զինվորի բրոնզե արձանիկը, մեջքին փոքրիկ դաշույնով, որը հավանաբար խեթ է։ Նման սաղավարտներ ունեն այն մարդիկ, որոնք նստած են բրոնզե դեկորատիվ կացնի վրա քանդակված կառքի մեջ (մ. թ. ա. II հազ. վերջ I հազ. սկիզբ), գտնված Սակրզից (Քուրդիստան)։ Այս կառքին լծված է առյուծ, իսկ կառքի ետևում կանգնած է թևերը բաց մի թռչուն[40]։ Մեր օրինակին շատ մոտ սաղավարտներ ունեն Օլիմպոսից հայտնաբերված բրոնզե եռոտանու վրա քանդակված մարդիկ, որոնք բռնել են սայլաձև մի առարկա (մ. թ. ա. VIII դար)[41]։

Ինչպես վերևում նշեցինք, մ. թ. ա III հազարամյակից սկսած, Հայաստանում գոյություն ունեին անիվավոր փոխադրամիջոցների տարածված տիպեր և այդ բնագավառում ձևավորված էին որոշակի կայուն ավանդույթներ։ Ի տարբերություն նշված ժամանակաշրջանի, մ. թ. ա. II հազարամյակի II կեսին, Հայաստանի ցեղային ավագանու կենցաղում մեծ տարածում են գտնում ռազմի կառքերը, կամ մարտակառքերը, որոնք չէին տարբերվում Առաջավոր Ասիայի լավագույն, առաջնակարգ տիպերից։ Մ. թ. ա. IX դարից սկսած Հայաստանում մեծ տարածում են գտնում ուրարտական մարտակառքերը նախ՝ խեթա-խուրրիականը և ապա՝ ասորեստանյան-ուրարտականը Առաջավոր Ասիայի մարտակառքերի հիմնական այն ձևերն էին, որ հետագայում լայնորեն տարածվեցին Իրանական աշխարհում, արևելամիջերկրականի շրջաններում և ապա նաև հունական մայրցամաքում[42]։

---

[38] С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении. Ереван, 1966, էջ 101, տախտ. XVI, նկ. 1, 2, 6, 11։

[39] G. Perrot et Ch. Chipiez, Phénicie, Cypre, Paris, էջ 441, նկ. 119, 120։

[40] J.-L. Huot, Iran, I, Genève—Paris—Munich, 1965, նկ. 86.

[41] «Искусство Древней Греции», նկ. 77б։

[42] Նման ազդեցություններն ու փոխառնչությունները հիմնավորվում են նաև նյութական մշակույթի այլ բնագավառներում գոյություն ունեցող փաստարկներով։ Ուսումնասիրողները ցույց են տվել Հայաստանի և Վրաստանի II հազարամյակի I կեսի ինչպես մետաղե, այնպես էլ խեցեղեն իրերի համանմանությունները Էգեյան աշխարհի հետ։ Մ. թ. ա. XVI դարի Էգեյան ծագում ունեցող սուսերներ են հանդիպում Հայաստանի (Զորագետ, Ղաչաղան) և Վրաստանի դամբարաններում, որոնք անժխտելի ապացույց են փոխանակային կապերի և փոխազդեցության։

Ուրարտական մարտակառքերը ձևով նման են ասորեստանյաններին[43]։ Վերջիններս ոչ այնքան թեթև արկղեր են, կողքերին խաչաձևվող կապարճներով։ Այստեղ արժե հիշատակել Հասանլուի գավաթի (մ. թ. ա. IX դար) արծաթե դրվագումը[44], որի վրա պատկերված մարտակառքը ասորեստանյան ոճ ունի՝ իր ծանր թափքի վրա խաչաձևվող կապարճներով, անիվի ձևով ու թռչնի գլխով ավարտվող սոնիով. առեղը բարձր է, ինչպես մեր նյութերում։ Հետաքրքրական է աքեմենյան շրջանի (մ. թ. ա. VI—IV դդ.) մարտակառքի մի ոսկե մոդել[45], որը Ռ. Գիրշմանի կարծիքով բակտրիական ծագում ունի։ Սրա թափքը ուղղանկյունաձև արկղիկ է, լծված է չորս ձի, վզներին ուղիղ լուծով, առեղը բարձր չէ, անիվներն ունեն ինը շյուղ։ Թափքին նստած երկու մարդկանցից մեկը վարում է կառքը ոսկե սանձաթելերի միջոցով, որոնք անցնում են լուծի վրայի օղակներից։ Գիրշմանը գտնում է, որ այս տիպը տարածված էր Ուրարտուում և իբրև օրինակ բերում է Մուսասիրի տաճարի մի քանի նվիրատվական մարտակառքեր, ինչպես նաև Ռուսա I-ի մ. թ. ա. VIII դարի բրոնզե մեծ մարտակառքը թագավորի քանդակով, որն իր վրա ուներ սեպագիր արձանագրություն։ Սակայն նա գտնում է, որ կառքի վրա եղած երկու մարդիկ, իրենց հագուստով և այլ մանրամասներով, իրանցիներ են։

Սույն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Լոռի-բերդի մարտակառքը արգասիքն է Հին Արևելքի խառնարանում ծնունդ առած և դարերի ընթացքում ձևավորված, հղկված ու կատարելագործված ձևերի։ Այն արտադրանքն է հին. քաղաքակիրթ աշխարհի հետ սերտորեն կապված և նրա մի մասնիկը կազմող Հյուսիսային Հայաստանի։

ЛОРИБЕРДСКАЯ КОЛЕСНИЦА ЭПОХИ ПОЗДНЕЙ БРОНЗЫ

С. Г. ДЕВЕДЖЯН

(Резюме)

В 1971 г. в большом каменном ящике (№ 7, XIV—XIII вв. до н. э.) среди предметов погребального инвентаря была найдена бронзовая модель колесницы, сходная с найденными в 50-х годах в погребениях Лчашена. Эти модели не имеют близких аналогов среди известных моделей и являются изделиями местных мастеров.

Из найденных моделей колесниц Древнего Востока они ближе других к хеттским своей щитовидной, полусферической передней частью, изяществом и легкостью кузова. Изображения хеттских боевых колесниц известны по египетским барельефам. Настоящие же деревянные образцы найдены в Египте.

Модели, найденные на территории Армении, своим строением связаны с хетто-хурритским миром, влияние которого в середине II тыс. до н. э. распространялось до греческого материка.

---

43 Հ. Մարտիրոսյան, Հ. Մնացականյան, Նոր Արեշի ուրարտական կոլումբարին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1958, № 10, էջ 71։ С. А. Есаян, Из истории колесного транспорта..., էջ 149—150։

44 E. Porada, Alt-Iran, Baden-Baden, 1962, էջ 103։

45 R. Ghirshman, Iran, München, 1964, էջ 218, նկ. 301։